ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N 138-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ

ԲՆՎՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____2023 թվականի N_____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N 138-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1–ին և 3-րդ մասերը և 34-րդ հոդվածի 1–ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի փետրվարի 6-ի ««Ագրոքիմիական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու և գործառույթներ վերապահելու մասին» N 138-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 3–րդ կետի 5–րդ ենթակետում □։□ նշանը փոխարինել □.□ նշանով։
2. Որոշման 3–րդ կետը լրացնել 6–րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«6) կարանտինային զննման անցակետում կենդանիների նկատմամբ անասնաբուժական միջոցառումների պարտադիր անցկացում։»։

3. Հավելվածի 14-րդ կետի 6-րդ ենթակետում □։□ նշանը փոխարինել □.□ նշանով։
4. Հավելվածի 14-րդ կետը լրացնել 7-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.
5. Որոշման հավելվածը (այսուհետ՝ Հավելված) լրացնել 18.1–րդ և 18.2–րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«18.1 Կազմակերպության տնօրենին արձակուրդ տրամադրվում է լիազորված պետական մարմնի ղեկավարի հրամանով:

18.2 Կազմակերպության տնօրենի արձակուրդը և գործուղումը նախապես համաձայնեցվում է լիազորված պետական մարմնի ղեկավարի հետ։»։

«7) կարանտինային զննման անցակետում կենդանիների նկատմամբ անասնաբուժական միջոցառումների պարտադիր անցկացում։»։

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ **Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**